ՀՏԴ : 929:+947.925Սիմոնյան

ՀՐԱՉԻԿ ՍԻՄՈՆՅԱՆ
(Ծննդյան 95-ամյակի առթիվ)*

Լրացավ հասարակական-քաղաքական և ազգային անվանի գործիչ, աշխիվ մտավորական, ՀՀ պետական մրցանակի դափնեկիր, ՀՀ ԳԱԱ ակադեմիկոս Հրաչիկ Ռուբենի Սիմոնյանի ծննդյան 95-ամյակը:

Հ. Սիմոնյանը ծնվել է 1928 թ. դեկտեմբերի 8-ին Գորիսի շրջանի Շինուհայր գյուղում: Տեղի միջնակարգ դպրոցն ավարտելուց հետո ընդունվել է Երևանի պետական համալսարանի պատմության ֆակուլտետը և գերազանց առաջադիմությամբ ավարտել 1952 թվականին: Նույն թվականին աշխատանքի է անցել «Խորհրդային Հայաստան» թերթում՝ որպես գրական աշխատող, այնուհետև՝ գործուղվել ծննդավայր՝ որպես շրջանային թերթի պատասխանատու քարտուղար: 1953 թ. աշխատանքի է անցել ՀԿԿ Գորիսի շրջկոմում. նախ՝ որպես հրահանգիչ, ապա՝ բաժնի վարիչ: 1957 թ. ընտրվել է շրջկոմի գաղափարական գծով քարտուղար: 1959 թ. Հ. Սիմոնյանն ընդունվել է ԽՄԿԿ Կենտկոմին առընթեր հասարակական գիտությունների ակադեմիան (Մոսկվա), որն ավարտել է 1962 թ.: Այնտեղ էլ նույն տարում պաշտպանել է թեկնածուական ատենախոսություն՝ ստանալով պատմական գիտությունների թեկնածուի գիտական աստիճան և հրատարակել այն որպես առաջին գիտական աշխատություն [«Перевооружение промышленности Армянской ССР в послевоенный период (1945–1950 гг.)»]*:*

Վերադառնալով Հայաստան՝ Հ. Սիմոնյանն աշխատանքի է անցել ՀԿԿ Կենտկոմին առընթեր կուսակցության պատմության ինստիտուտում. 1962–1966 թթ.՝ որպես ավագ գիտաշխատող, իսկ 1977–1990 թթ.՝ տնօրեն և գիտական աստիճաններ շնորհող մասնագիտական խորհրդի ղեկավար: 1966–1977 թթ. տարբեր պաշտոններ է զբաղեցրել ՀԿԿ Կենտկոմում: 1990–1991 թթ. վարել է ՀՀ ԳԱԱ պատմության և տնտեսագիտության բաժանմունքի ակադեմիկոս-քարտուղարի պաշտոնը, իսկ 1991–1994 թթ. եղել է Սփյուռքահայության հետ մշակութային կապերի կոմիտեի նախագահ:

1970 թ. Հ. Սիմոնյանը պաշտպանել է դոկտորական ատենախոսություն («Սփյուռքահայ առաջադիմական ուժերը խաղաղության, դեմոկրատիայի և սոցիալիզմի համար մղվող պայքարում») և ստացել պատմական գիտությունների դոկտորի գիտական աստիճան, իսկ 1971 թ. նրան շնորհվել է պրոֆեսորի կոչում: 1986 թ. ընտրվել է ՀԽՍՀ ԳԱ թղթակից անդամ, 1996 թ.՝ ՀՀ ԳԱԱ

---

* *Ներկայացվել է 03. IV. 2023 թ., ընդունվել է տպագրության 19. VI. 2023 թ.:*

ակադեմիկոս: 1994–2006 թթ. եղել է ՀՀ ԳԱԱ նախագահի խորհրդական՝ միաժամանակ 1999–2003 թթ. ղեկավարելով Երևանի պետական համալսարանի հայոց պատմության ամբիոնը:

Տարբեր ժամանակներում Հ. Սիմոնյանը եղել է շրջանային և քաղաքային խորհուրդների, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի և ՀՀ Ազգային ժողովի պատգամավոր, ՀԿԿ Կենտկոմի անդամ, ՀԽՍՀ Գերագույն խորհրդի ներման հանձնաժողովի նախագահ:

1964 թվականից Հ. Սիմոնյանը դասավանդել է ԵՊՀ պատմության և փիլիսոփայության ֆակուլտետներում, հանրապետության այլ բուհերում, գիտական զեկուցումներով հանդես է եկել Մոսկվայում, Լենինգրադում, Թբիլիսիում, Բաքվում, ԱՄՆ-ում, Ֆրանսիայում, Գերմանիայում և այլուր՝ ըստ արժանվույն ներկայացնելով հայրենի գիտության նվաճումները: Նրա աշխատանքներից մի քանիսը լույս են տեսել Չեխոսլովակիայում, ԱՄՆ-ում, Լիբանանում, Իրանում:

Ակադեմիկոս Հ. Սիմոնյանն անգնահատելի դեր է ունեցել մեր ժողովրդի պատմության նոր և նորագույն շրջանի շատ հիմնահարցեր խորությամբ ուսումնասիրելու գործում: Նրա գրչին են պատկանում ավելի քան 40 մենագրություն և շուրջ 400 գիտական հոդված:

1960-ական թվականներին անվանի ակադեմիկոսի գիտական հետաքրքրությունների ոլորտը հայկական սիյուռքն էր, հատկապես՝ այնտեղ գործող հայ քաղաքական ուժերը, նրանց գործունեությունը, փոխհարաբերությունները, Խորհրդային Հայաստանի նկատմամբ վերաբերմունքը: 1968 թ. հրատարակում է «Սիյուռքահայությունը սոցիալ-քաղաքական պայքարի ուղիներում» գիրքը:

1970-ական թվականների սկզբներից Հ. Սիմոնյանի գիտական հետաքրքրությունների կենտրոնում են եղել քաղաքական-փիլիսոփայական բնույթի հարցերը: Նա ընթերցողներին է ներկայացրել ծավալուն մենագրություններ՝ «Ինդուստրիալ հասարակության տեսությունները» (1973), «Արդի բուրժուական գաղափարախոսության քննադատական ուրվագծեր» (2 հատորով, 1977, 1980), «Գիտատեխնիկական հեղափոխությունը և նրա սոցիալական հետևանքները» (1982) և այլն: Այդ աշխատություններում տրվել են բուրժուական գաղափարական մի շարք ուղղությունների ծագման և զարգացման պատմությունը, դրանց հետագա փոխակերպումների փուլերն ու սոցիալ-դասակարգային էությունը:

1970-ականների վերջերից Հ. Սիմոնյանի գիտական ուսումնասիրությունների միակ բնագավառը հայագիտությունն էր: Իրար հետ սերտորեն կապված են գիտնականի երկու՝ «Թուրք ազգային բուրժուազիայի գաղափարաբանությունը և քաղաքականությունը» (1986) և «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» (1991) ուսումնասիրությունները: Աղբյուրագիտական հարուստ հենքի, ժամանակի մամուլի և գիտական աշխատությունների օգտագործումով այդ ուսումնասիրություններն աչքի են ընկնում գիտական խոր ընդհանրացումներով: Առաջին աշխատության մեջ բացահայտված է թուրքական բուրժուազիայի առաջացման ու ձևավորման պատմական ժամանակաշրջանը, որը ճակատագրական և բախտորոշ եղավ հայ ժողովրդի համար: Հանգամանորեն քննարկված են «օսմանիզմ», «իսլամիզմ», «պանիսլամիզմ»,

«նոր օսմանիզմ», «թուրքիզմ», «պանթուրքիզմ» հասկացությունները, որոնք ներկայացված են իբրև թուրքական բուրժուազիայի գաղափարախոսության հիմնական տարրերը տարբեր ժամանակահատվածներում: «Թուրք-հայկական հարաբերությունների պատմությունից» ուսումնասիրությունում հեղինակը, ներառելով նախորդ աշխատության հիմնական ելակետային դրույթները, շեշտը դրել է պանթուրքիզմի՝ հայ ժողովրդի համար այսօր էլ խիստ վտանգավոր գաղափարախոսության բացահայտման վրա:

Հետագա տարիներին ակադեմիկոս Հ. Սիմոնյան գիտնականի հետազոտություններն ուղղված էին հարազատ ժողովրդի ազգային-ազատագրական շարժումների ուսումնասիրմանը: Հայ ժողովրդի ազատագրական պայքարի խորհրդանիշ մեծ հայդուկապետ Անդրանիկը և նրա ժամանակը դարձան երկհատորանոց աշխատության թեման: Այն լույս է տեսել 1996 թվականին, որում լուսաբանված են 1865–1927 թթ. հայ հասարակական-քաղաքական կյանքի, ազատագրական պայքարի բազմաթիվ իրադարձություններ:

Շարունակելով հայ ժողովրդի ազատագրական պայքարի պատմության խորքային պեղումները՝ Հ. Սիմոնյանը ստեղծել է «Ազատագրական պայքարի ուղիներում» հնգհատոր աշխատությունը (առաջին 2 հատորները լույս են տեսել 2003 թ., մյուս 2-ը՝ 2009 թ. և 2010 թ., հինգերորդը՝ 2013 թ.): Ժամանակաշրջանի համաշխարհային իրադարձությունների լույսի ներքո այդ հատորներում բացահայտված են 1905–1914 թթ. հայոց պատմության նորանոր շերտեր: Հազարից ավելի էջեր ընդգրկող յուրաքանչյուր հատորում օգտագործված են բազմաթիվ աղբյուրներ՝ Հայաստանի ազգային արխիվի, Մաշտոցի անվան Մատենադարանի, ազգային գործիչների անձնական արխիվների բազմաթիվ նյութեր, ժամանակի մամուլում զետեղված փաստեր, որոնց մեծ մասն առաջին անգամ է շրջանառության մեջ դրվում: Հ. Սիմոնյանը վերլուծել և համակողմանիորեն քննության է առել XX դարասկզբից մինչև Առաջին համաշխարհային պատերազմն ընկած ժամանակահատվածում Արևելյան ու Արևմտյան Հայաստանում տեղի ունեցած դեպքերը և իրադարձությունները, կատարել արժեքավոր եզրահանգումներ: Արժևորելով ականավոր գիտնականի մեծածավալ հնգհատորյակը՝ անհրաժեշտ է նշել, որ բոլոր հատորներն էլ աչքի են ընկնում իրենց ինքնատիպությամբ, գիտական խորաթափանցությամբ, փաստական հարուստ նյութերի բազմակողմանի վերլուծությամբ, եզրակացությունների տրամաբանությամբ, գիտական նորույթով և ունեն քաղաքական կարևոր նշանակություն՝ հատկապես պատմությունից դասեր քաղելու առումով: Աշխատանքն արժանացել է ՀՀ պետական մրցանակի:

2009 թ. ապրիլին, երբ լրանում էր Կիլիկիայի հայերի ջարդերի 100-ամյակը, այդ առիթով լույս է տեսել Հ. Սիմոնյանի «Հայերի զանգվածային կոտորածները Կիլիկիայում (1909 թ. ապրիլ)» արժեքավոր ծավալուն մենագրությունը՝ իր վրա բևեռելով պատմաբանների և, առհասարակ, ընթերցող հասարակայնության ուշադրությունը: Այն նաև թարգմանվել է անգլերեն և հրատարակվել Մեծ Բրիտանիայում (2012 թ.):

2014 թ. հրատարակվել է Հ. Սիմոնյանի «1912–1913 թթ. Բալկանյան պատերազմները և հայերը» ստվարածավալ աշխատությունը, որտեղ հեղինակն իր առջև խնդիր էր դրել տալ Բալկանյան երկու պատերազմների նկարա-

գրությունը՝ հենվելով գերազանցապես ժամանակի հայկական, հատկապես՝ պոլսահայ մամուլի հրապարակումների վրա: Վերջինիս էջերում օր օրի լայնորեն լուսաբանվել են պատերազմական իրադարձությունները Բալկանյան ռազմաճակատներում և դրանց անդրադարձը թիկունքում: Հայաստանի, Ռուսաստանի և Բուլղարիայի արխիվներում պահպանված փաստաթղթերի ու նյութերի հիման վրա ներկայացված և վերլուծված է հայերի մասնակցությունը պատերազմական իրադարձություններին:

2014 թ. նաև լույս է տեսել Հ. Սիմոնյանի «Ադրբեջանցիների պատմության «հերոսական» էջերից մեկը լուսանկարներում» գիրքը, որում ներկայացված են Բաքվում 1905 թ. փետրվարին ադրբեջանական ազգայնամոլների կողմից քաղաքի խաղաղ հայ բնակչության դեմ սանձազերծված արյունալի ոճրագործությունները և հայերի արժանի հակահարվածը: Նշենք՝ առաջին անգամ գիտական շրջանառության մեջ են դրվել և տպագրվել այդ արյունալի դեպքերը պատկերող ֆոտովավերագրեր:

Արդարև, նշանավոր գիտնականի կեղարյա վաստակը ծանրակշիռ է և ուսանելի:

Ակադեմիկոսը, լինելով ՀՀ առաջին գումարման Գերագույն խորհրդի պատգամավոր, հեղինակել և քննարկման է ներկայացրել որոշումների բազմաթիվ նախագծեր: Իր ակտիվ մասնակցությամբ նա որոշակի նպաստ է բերել Հայաստանի երրորդ Հանրապետության հռչակման ու կայացման գործընթացին: Այդ տարիների պատմության շատ վավերագրեր ու նյութեր, որոնք արտացոլում են քաղաքական գործչի ու գիտնականի գործունեությունը, պահպանվում են Ազգային արխիվի «Հ. Սիմոնյանի ֆոնդ»-ում:

Հ. Սիմոնյանի անմիջական ղեկավարությամբ հեղինակային խումբը 2000 թ. հրատարակել է հայոց պատմության բուհական ծրագիրն ու դասագիրքը ոչ մասնագիտական ֆակուլտետների ուսանողության համար: Նրա խմբագրությամբ պատրաստվել և 2012 թ. հրատարակվել է հայոց պատմության բուհական դասագրքի լրամշակված ու ամբողջացված տարբերակը: Տարիներ շարունակ դասավանդելով ԵՊՀ պատմության ֆակուլտետում՝ նա իր գիտելիքներն ու իմացությունն անմնացորդ նվիրումով հաղորդել է ուսանողությանը, ասպիրանտներին՝ ղեկավարելով մի շարք ավարտական, թեկնածուական և դոկտորական աշխատանքներ, հոգածությամբ նպաստելով գիտական կադրերի պատրաստմանը:

2008–2012 թթ. ղեկավարել է ԵՊՀ հայագիտական հետազոտությունների ինստիտուտի ցեղասպանագիտության բաժինը:

Հ. Սիմոնյանը մահացել է 2016 թ. հունվարի 29-ին Երևանում:

Ակադեմիկոսը չհասցրեց հրատարակել ավարտին հասցրած մի քանի աշխատություններ, որը նախաձեռնեց և հրատարակեց որդին՝ Արամ Սիմոնյանը (պ. գ. դ., պրոֆ., ՀՀ ԳԱԱ թղթակից անդամ): «Из истории «политического оправдания» полководца Андраника» *(2016) աշխատության մեջ մանրամասն ներկայացված են Զորավարի կյանքի և գործունեության մասին յուրահատուկ փաստեր ու Խորհրդային Միության պաշտոնական ձեռնարկումները՝ քաղաքական արդարացման վերաբերյալ: «1905–1912 թթ. պարսկական հեղափոխությունը և հայերը» (2017) հետազոտության մեջ բազմակողմանի քննության են առնված Պարսկաստանում սահմանադրական*

հեղափոխության (1908–1914 թթ.) գործընթացները և, հատկապես, հայերի դերն այդ շարժման մեջ, Եվրասիայում տեղի ունեցող աշխարհաքաղաքական գործընթացների համատեքստում դիտարկված են սահմանադրականների ու միապետականների երկարատև անցիջում պայքարը, սոցիալ-տնտեսական անմխիթար վիճակը, կառավարման ճգնաժամը և տարածաշրջանի խոշոր դերակատարների՝ Անգլիայի, Ֆրանսիայի, Գերմանիայի ու Ռուսաստանի նկրտումները և Թուրքիայի գործողություններն ու տարածքային հավակնությունները: Նյութը հիմնականում քաղված է հայկական և ռուսական արխիվային փաստաթղթերից ու ժամանակի հայալեզու և ռուսալեզու մամուլից: Այս երկու հիմնարար աշխատությունները ևս խոսում են վաստակաշատ գիտնականի թողած հարուստ պատմագիտական ժառանգության մասին:

Հ. Սիմոնյանի բեղուն գործունեությունը հայագիտությանն անմնացորդ նվիրյալի դաստիարակչական փայլուն օրինակ է գիտակրթական լայն հանրույթի, առավելապես՝ երիտասարդության համար:

ՍՈՒՐԵՆ ԱՎԵՏԻՍՅԱՆ

Պ. գ. թ., դոցենտ, ՀՀ ԳԱԱ պատմության ինստիտուտի նորագույն պատմության բաժնի ավագ գիտաշխատող: Գիտական հետաքրքրությունները՝ նորագույն շրջանի և միջազգային հարաբերությունների պատմության ուսումնասիրություն: Հեղինակ է 4 մենագրության և ավելի քան 2 տասնյակ հոդվածի: suren-avetisyan@mail.ru